

Инициальный заголовок

Григорьев

382  
27-26

1935г

0120-10

Հ Ա Խ 2 Լ Ո Ւ Ժ Ո Ղ Կ Բ Մ Ա Տ

ՏԱՐՐԱԿԱՆ ՅԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

# ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԾՐԱԳՐԵՐ

Ի Պ Ր Ա Կ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ  
ԳԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ  
ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒ  
ԹՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆ  
ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆ  
ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ  
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՈՒԽՈՒՑՈՒՄ

ԴԲ  
ԴԲ

372  
S-26

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ

1935

13 AUG 2013

30321

Պատասխանառ Խմբագիր Ն. ՂԱԶԱՐՅԱՆ  
Տեխնիկական և մքագիր Վ. ՄԱՆՈՒԿՅԱՆ  
Սրբագրիչ Ս. ՇԱՀԲԱԶՅԱՆ

372

S-26

ՎՎ.

## ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

### ԲԱՅԱՏՐԱԿԱՆ

«Լեզուն ռեալ գիտակցություն ե» (Կ. Մարքս), «մարդկային փոխարարերության կարևորագույն միջոցը» (Լենին), գասակարգային պայքարի կարևորագույն գենքը, աշխատավոր մասսաների կուլտուրական բարձրացման հզորագույն գործիքը, և «առաջ ե յեկել, ինչպես և գիտակցությունը, մարդկանց հազորդակցվելու անհրաժեշտությունից» (Կ. Մարքս): Խորհրդային իշխանության լենինյան ազգային քաղաքականության պայմաններում, գասակարգային պայքարի ներկա ետապում այսորվա գրական հայերենն իր արժեքով վերոհիշյալ մոմենտների խտացումն ե, և մասսաների կողմից այդ գրական հայերենին տիրապետելը դասակարգային պայքարի, կուլտուրական հեղափոխության և սոցիալիստական շինարարության գործ ե հանդիսանում։ Այս իսկ պատճառով, մայրենի լեզվի ավանդումը դպրոցում պահանջում ե նյութի սիստեմավորում, մշակվածություն և հաջորդական դասավորություն. . . Մայրենի լեզվի ծրագրին իսկապես պետք ե ապահովի սիստեմատիկ և ճշգրտորեն սահմանադրված գիտելիքների մի ամփոփ շրջանի յուրացում, ինչպես և անթերի ընթերցանության, գրավորության պահպանի կայուն ունակություններ» (Համկոմկուսի (Բ) Կենտկոմի 1932 թ. ողոստոսի 25-ի վորոշումից):

Այս իսկ պատճառով՝ ուսման յուրաքանչյուր տարվա ծրագրային նյութը գասավորված ե ըստ հետեյալ հիմնական բաժինների:

- ա) բանավոր խոսք.
- բ) ձեռագրի ուսուցում և գրավոր խոսք.
- շ) ընթերցանություն.
- դ) քերականություն և ուղղագրություն.
- բացի այդ, արվում ե նաև գեղագրության ծրագիր:

Գլավլիս 306  
Պատվիր 1204  
Հրատարակ. 3492  
Տիրամ 2000

Հանձնված ե արտագրության 22 հոկտեմբերի 1935 թ.  
Ստորագրված ե տպելու 14 նոյեմբերի 1935

Գետհրատի տպարան, Յերեվան, II Գնումի, 4.



847

37

Սակայն նյութի այսպիսի դասավորումը չի նշանագում, թե հենց այդ կարգով ել պետք ե անցնել. բոլոր բառինների պարապմունքները պետք ե գնան զուգընթացորար և միմյանց հետ կապակցված ձևով. մասնավորապես՝ խոսքի զարգացումը, վորաչես աշխատանքի հիմնական մաս, եղջիւ աշխատանքի բոլոր բաժիններում ամբողջ տարին տաղպետք ե գտնի:

Նույնը պետք ե ասել նաև ընթերցանության վերաբերյալ:

Խոսքի զարգացման ձևերից շատերը կտպված են ընթերցանության հետ: Քերականության աշխատանքի մեծ մասը նույնպես տեքստերը կարդալու հիման վրա յէ կատարվում: Լեզվի դասավանդությանը հատկացրած ժամերը զանազան բաժինների մեջ բաշխելիս նկատի պետք ե ունենալ, վորշածը դասարաններում ժամանակի մեծ մասը հատկացվում է կարդալուն և գրելուն, իսկ բարձր դասարաններում ժամանակը համեմատական չափով բաշխվում է կարդալու, քերականության և խոսքի զարգացման աշխատանքների մեջ: Գրադիտության ուսուցումը պետք է սկսել տպադրով ու ձեռապով և առաջ տանել կապակցված ձևով: Առանձին ուշադրություն պետք է դարձնել թե՛ գեղագրության վրա: Ուղղագրության ուսուցումը պետք է տանել հաջորդական կերպով, ըստ հնարավորության կապելով քերականության հետ: Քերականության դասընթացն սկսվում է 3-րդ դասարանից: 1-ին և 2-րդ դասարաններում աշակերտներին պետք է սովորեցնել պարզ նախադասություններն ու կառուցելը, ինչպես և ճանաչել զոյականները, ածականները և բայերը՝ առանց տերմինների, 3-րդ դասարանում աշակերտները սովորում են «յենթակա» և «ստորոգյալ» տերմինները, իսկ նախադասության մյուս անդամներն ընդհանուր տոմամբ կոչվում են «լրացումներ»:

Այս դասարանում պետք ե անցնել զոյականի հոլովումը, պետք ե տալ բայի ժամանակների պարզ ըմբռնումը, աշակերտները պետք ե ճանաչեն անձնական գերանունները և անձականները:

4-րդ դասարանում պետք ե ավանդել ի և ու հոլովումները:

Այս դասարանում աշակերտները տերմինավորված դադար են ստանում նաև թվականների, գերանունների (անձ-

նական և հարցական), կապերի, շաղկապների և ձայնարկությունների մասին:

Այսպիսով ամփոփվում է տարրական քերականության դասընթացը:

Տարրական դպրոցում նախադասության գիտական սահմանում չպետք ե տալ: 1-ին և 2-րդ դասարաններում «նախադասություն» բառը գործածել կարելի յէ, իսկ 3-րդ դասարանից պետք ե տալ նաև հիմնական հատկանիշները: 4-րդ դասարանում պետք ե զաղափար տալ բարդ նախադասության մասին և սովորեցնել միավորյալ նախադասություն կառուցելը:

Տարրական դպրոցում աշակերտությունը ծանոթանում է կետադրության բոլոր նշաններին, վերջակետի և առողանության նշանների գործածության բոլոր դեպքերին, ինչպես և ստորակետի, միջակետի, չակերտի և մյուս նշանների գործածության պարզագույն դեպքերին:

Բանավոր խոսքի զարգացման բաժնում առանձին ուշադրություն պետք է դարձնել բարրառային լեզուն գրականով փոխարինելուն և պարզ ու բարդ նախադասությունները կանոնավոր կառուցելու ունակությանը: Բանավոր խոսքի մեջ կանոնավոր բարդ նախադասություններ կառուցելու խիստ պահանջ պետք է ներկայացնել՝ սկսած 3-րդ դասարանից:

Ընթերցանության բաժնում առանձին ուշադրություն պետք է նվիրել բառերը վերլուծելու և հնչյուններն ու վանկերը համադրելու ունակությունների զարգացմանը, միան, վոր չի դժվարացնի ամբողջական բառերով գրագիրություն անցնելը: Ի վերջո աշակերտներին պետք է ծանոթացնել բառակազմության և հնչյունափոխության պարզույն ձևերին:

## ԾՐԾԳԻՐ

### ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆ

Առաջին կիսամյակ

Բանավոր խոսք

1. Յերեխաններին վարժեցնել բարձր, պարզ, առանց շտապելու խոսելուն: Առաջին իսկ որից սկսել աստիճանաց գար գրական լեզվով խոսել սովորեցնելու աշխատանքը:

Ուղղել յերեխայի խոսքի պակասավոր կողմերը՝ վերջավություններ կուլ տալը, խոսելու ժամանակ չնշառության անկան նույթյունը, կակագելը և այլն։

Ծանոթություն. Յերեխայի խոսքի պակասավոր կողմերն ուղղելու աշխատանքներն սկսվում են դպրոցական կյանքի հենց առաջին որից և շարունակվում տարրական դպրոցի ուսման վողջ ընթացքում։

2. Բառարանային աշխատանք. առարկաների պարզ խմբավորում (կենդանիներ, բույսեր, աշխատանքի գործիքներ, դպրոցական և առտնին կենցաղի իրեր և այլն)։ Գործողության անուններ։ (Ի՞նչ ե անում ներկարարը։ Ներկում ե)։ Առարկաների ճանաչումն ըստ գույնի (ձյունը սպիտակ ե, գրաստախտակը սև ե, ածուխը սև ե և այլն), ըստ համի (քաշախը քրու յե, շաքարը քաղցր ե և այլն)։

Առարկաների համեմատությունն ըստ հատկությունների. բարձր-ցածր, յերկար-կարճ, հաստ-բարակ, լայն-հեռ և այլն։

3. Շրջապատող իրականության հետ կապված (յերեխաների կյանքի, նրանց աշխատանքի, մեծերի աշխատանքի, դպրոցի, բնության, առտնին կյանքի և այլն) զանազան հարցերին կարծ ու լրիվ պատասխաններ տալու ունակություն։

Շրջապատող իրականության վերաբերմամբ կատարած դիմումները բանավոր և կապակցված կերպով հաղորդելու ունակություն։

Ուրիշի խոսքը (փոքրիկ պատմվածք կամ բացատրություն) լսելու ունակություն։

4. Նկարներով աշխատանք. նկարի բովանդակության չուրջը տրված հարցերին պատասխաննելու ունակություն (որինակ. Ի՞նչ ե նկարված։ Պատասխանի տեսակները։ Շունը վազում ե։ Յերեխաները ծաղիկ են քաղում)։

Զեռագրի ուսուցում և գրավոր խոսք

Նախքան գրաճանաչության անցնելը, վորպես գրել ողոքություննելու նախապատրաստություն, մի քանի որ հատկացնել տառերի ելեմենտներ պարունակող գրաֆիկ նկարչական վարժություններին։

Բնտելացնել գրելու տեխնիկային (կանոնավոր նստել գրիչ և մատիտ բռնել և այլն)։

Սովորեցնել կանոնավոր, մաքուր, պարզ և վոչ շատ խոշոր (միջին մասը 5 մմ., իսկ ամբողջ տառը 17 մմ., ուրինակ՝ կ, ի, և այլն) տառերով գրել։ Առանձին ուշարբությունների կազմակերպությունը (միանման ելեմենտների հատառերի համաչափությունը, հեռավորությունը, տառերի համաչափամատ մեծությունը, հեռավորությունը, զուգահեռությունը և այլն)։

Առանձին բառերի և նախաղասությունների գրություն՝ պահպանելով դժվարության աստիճանական աճումը։

Առանձին տառերի այն ելեմենտների գրության վարժություններ, վորոնք դժվարամատչելի յեն աշակերտին։ Զեռագրիրը լավացնելու նպատակով առանձին վանկերի և տառերի գրության վարժություններ։

### Ընթերցանություն

Կարողանալ առանց տառեր բաց թողնելու, առանց կրկնությունների և այլ սխալների, պարզ ու գրական արտասանությամբ կարդալ նկարների տակը գրած ամբողջական բառեր, պարզ ու մատչելի բառերից կազմած համառոտ նախաղասություններ, գրատախտակի վրա ուսուցչի գրած բառերն ու կարծ գրությունները, գրաճանաչության դասադրի հողմաները և այլն։

Վարժեցնել կարդացած փոքրիկ և պարզ հողմաների բովանդակության շուրջը տրված հարցերին պատասխաննել։

### ՅԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՑԱԿ

#### Բանավոր խոսք

Մասնակցություն հարցերի կողեկտիվ քննարկմանը. դարսի ժամանակ կարողանալ լսել ուրիշի խոսքը, ձայն խնդրել և ամենահամառոտ հաղորդում կատարել։

Անդիր անել ուսուցչի կարդացած մանկական փոքրիկ և մատչելի վոտանավորները։

Նկարներով աշխատանք. նկարների տակը գրելու համար կապակցություն կամ նախաղասություն կազմել (որինակ՝ մուկն ու կատար, գայլ, աղվես, կատար խաղում ե և այլն)։ Միևնույն անցքի տարրեր մոմենտները պատկերող նկարներով պատմելու ունակություն։

Բառարանային աշխատանք. սովորել այն նյութերի առուները, վորոնցից չինված ե առաջկան (որինակ՝ բաժակն ապակուզ ե, սեղանը փայտից ե և այլն):

### Զեռագրի ուսուցում և գրավոր խոսք

Առանց տառ բաց թողնելու, ամբողջական բառերով, իսկ յերկար բառերը վանկերով (բայց վոչ տառատառ) կարողանալ գիտակցորեն ու անսխալ արտադրել գրատախտակից կարճ լոգունդներ, ուսումնադաստիարակչական պատվերներ, կոլեկտիվ կերպով մշակված կարճ նախադասություններթե՛ հողվածի բովանդակության և թե՛ ուսուցչի պատմածի շուրջը, բավարարելով կանոնավոր ձեռագրի բոլոր պահանջները:

Կարողանալ ուղղագրական տեսակետից ճիշտ գրել ուսուցչի թելադրած բառերը և համառոտ նախադասությունները: Այս աշխատանքի ժամանակ պետք է պահպանել դժվարության աստիճանական աճումը, խուսափել այնպիսի բառերից, վորոնց գրությունը չի համապատասխանում արտասանության (գրելու ունակությունների մեջ զարգացնել դիտողամոտորային հիշողությունը): Տարեկերջին, տեքստը նախապես վարժ կարդալ սովորելուց հետո, կարողանալ դառագրքի տպագրից արտադրել և դիտողական թելադրությամբ համառոտ նախադասություններ գրել: Բառերը բաց թողած նախադասություններ արտադրել՝ լրացնելով բաց թողած բառերը: Կարողանալ գրել իր անունը ու ազգանունը:

### Ընթերցանություն

Կարողանալ առանց բառեր բաց թողնելու և առանց կրկը նությունների, համեմատաբար ավելի արագ կարդալ ընթերցարանի հողվածները, վոտանավորները, ինչպես և իր ձեռու գիր տեքստը:

Սովորեցնել դասագրքում հանդիպող վերջակետի, ստորակետի և առողջության նշանների անուններն ու նշանակությունն ընթերցանության ժամանակ: Ուսուցչի զեկավարությամբ գերերով կարդալ դասագրքի և մանկական ընթերցանության գրքի համապատասխան հողվածներն ու վոտանավորները:

Գիտենալ գրքի հետ վարելու և գիրքը պահպանելու կանոնները:

Քերականական և ուղղագրական նախնական գիտելիքներ

Աշակերտների կանոնավոր ու լրիվ պատասխանն ոգտագործել վորպես պարզ նախադասության որինակ: Սովորեցնել պարզ համառոտ նախադասություն կառուցելը (գործող անձ և գործողություն):

Գրքում գտնել ամբողջական միտք արտահայտող բառերի կապակցություն: Ուշադրություն դարձնել ինտոնացիայի վրա: Գիտենալ վերջակետի, վորպես ամբողջական միտք արտահայտող նախադասության վերջին նշանի, գործածությունը: Կարողանալ գրել ուսուցչի կազմած պարզ համառոտ նախադասությունները՝ սկսելով մեծատառով և վերջակետ:

Կարողանալ վոչ շատ ընդարձակ նախադասությունները բառերի բաժանել, բառերը վանկերի, վանկերը հնչյունների: Կարողանալ նախադասության մեջ գտնել մտքով իրար հետ կապ ունեցող բառերը (հարցերի ողնությամբ): Գիտենալ մեծատառի գործածության հետեւյալ պարզագույն դեպքերը՝ վերնադիրն սկսվում և մեծատառով: Նոր գրությունն սկսվում և մեծատառով: Վերջակետից հետո բառն սկսվում և մեծատառով: մարդկանց անուններն ու ազգանուններն սկսվում են մեծատառով:

Գիտենալ տողադարձի պարզագույն կանոնները:

Գիտենալ, վոր գրելիս լուսանցքը չի կարելի անցնել, և ուշ տողադարձ անելիս տողադարձի նշան պետք է գնել: Գիտենալ, վոր միավանկ բառերը չի կարելի տողադարձ անել:

### ՅԵՐԿՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՐԱՆ

#### Բանավոր խոսք

1. Կարողանալ աշխատանքի, խաղի և հանձնաբարության կատարման մասին բանավոր հակիրճ հաղորդում կատարել կատարման մասին բանավոր հակիրճ հաղորդում կատարել, (ով եր աշխատում, ի՞նչ եր անում, ի՞նչ արդյօնեա ստացվեց): Կարողանալ իր կամ իր ընկերների կյանքից զանազան անցքերի և զիավածների մասին կապակցված պատմել:

Կարողանալ դասարանի կամ ամբողջ աշակերտության ժողովներում դասարանին վերաբերող հաղորդում կատարել, հարց տալ, հարց առաջադրել: Վերնադիր չունեցող համաձների համար վերնադրեր հնարել: Տեսածի, լսածի և վածների համար վերնադրեր հնարել: Տեսածի, լսածի և

դիտածի դասարանական քննությանը մասնակցել։ Անդի՛ր սովորել վոտանավորներ։

2. Աշխատանիք նկարներով։ Գրքում կամ ուսուցչի կողմէից տրված հարցերի ոգնությամբ պատմել նկարի բովանդակությունը։ Արդեն մշակված հողվածներում լողունզներ, կապակցություններ կամ վոտանավորներ գտնել՝ նկարի տակը դրելու համար։

3. Սեփական բառարան կազմելու ունակություն՝ ողտագործելով նաև նկարները։ Հականից բառեր կազմելու վարժություն (մեծ-փոքր, աղմուկ-լոռուքյուն)։

Դասագրքի բառարանն ողտագործելու ունակություն։

### Զեռագրի ուսուցում և գրավոր խոսք

Նախորդ տարվա համեմատությամբ և իմաստի տեսարկետից ավելի գժվազ բառեր ու նախադասություններ կանոնավոր և պարզ գրելու ունակություն։

Գրքի հողվածները, աշակերտների տպավորությունները, ապրումներն ու դիտողությունները մշակել և դարձնել գիտակցական արտադրության, դիտողաբացատրական թերագորության և ուղղագրական տեսակետից մշակված շատ կարճ շարադրության նյութ։

Գրատախտակի վրա կանխապես ապահովելով գրվելիք գժվար բառերի ուղղագրությունը՝ սովորեցնել կատարած աշխատանքների որագիրը կազմել, 5—6 հարցից բաղկացած անկետա լրացնել, պարզ հասցե և կարճ նամակ գրել։

Պատի թերթի համար փոքրիկ հողվածների և տեղեկությունների մշակում դասարանում։ Ուսուցչի հսկողությամբ դրավոր շարադրել նկարների համառոտ բովանդակությունը։ Հարցերին գրավոր պատասխաններ տալով՝ հողվածի շուրջը կապակցված պարզ շարադրություն կազմել։

### Ընթերցանություն

Փոքրիկ հողվածի, վոտանավորի, լողունդի գիտակցական և սահուն ընթերցում՝ բարձր արտահայտիչ և կանոնավոր արտասանությամբ, պահպանելով առողջապահության և կետագրության կանոնները (վերջակետ, հարցական և բացական չական նշաններ)։ Իր և իր ընկերների ձեռագիր տեքստը կարդալու վարժություն։ Դերերով արտահայտիչ կարդալու հմտություն։

Կարդացածի քննարկում՝ հարցերի ողնությամբ։ Հոգվածները մասերի բաժանելու ու վերնադրել, մասերի բովանդակությունը պատմել։

Կարդացածից անհասկանալի բառեր կամ նախադասություններ առանձնացնելու հմտություն։

Լուր ընթերցանություն՝ կատարելով ուսուցչի հանձնարարությունները (գտնել տրված հարցերի պատասխանը և այլն)։

Ծանոթություն գրքին. ինչի՞ համար են՝ յերեսը, վերնադրային եջը, վերնադրելը. ո՞վ ե հեղինակը. եջերի թիվը, տեքստերի վերնադրելը, ցանկը։

Ուսուցչի տված առաջադրանքով և ցուցումներով ապահովել տանը կարդալու ճիշտ ընթացքը և պարբերաբար ստուգել արդյունքները։

Զանազան մանկական գեղարվեստական մատչելի դըրվածքներից ու «Հոկտեմբերիկ»-ից առանձին պարզ պատմվածքների և կարճ վոտանավորների ընթերցում։ Զրույց արտադպրոցական ընթերցանության մասին (ի՞նչ գիրք և կարդացել աշակերտն ինքը, կամ ի՞նչ գիրք են կարդացել ուրիշները նրա համար, ի՞նչ գրքերի մասին են պատմել մեծերը և այլն)։ Գրքում նկարագրված վորեւե դիպլամատ համառոտ կերպով պատմելու ունակություն։

Քերականական և ուղղագրական նախնական գիտելիքներ

1. Կրկնել և խորացնել առաջին դասարանում անցածը։

Նախադասություն։ Շարունակել պարզ նախադասություն կառուցելու վարժություններ։ Գիտենալ վերջակետի գործածությունը նախադասության վերջում։ Գիտենալ, թե նոխադասություններից ի՞նչպես ե պատմվածք կազմվում։ Գիտենալ բառերի կապակցությունը նախադասության մեջ՝ ըստ իմաստի։ կարողանալ լրացնել նախադասությունների մեջ բաց թողած կամ հարցերով փոխարինված բառերը՝ թե՛ մեջ բաց թողած կամ հարցերով որինակ՝ յեւ. . . . տուն, աշակերտները սովորում են . . . (վո՞րտեղ)։ Աշակերտները վերադասի (վո՞րտեղից) և այլն։

2. Նախադասության մեջ գտնել այն բառերը, վորոնք ցույց են տալիս առարկա. կազմել շըջապատող և կամ ծանոթ առարկաների անունների ցանկ։

Առարկաների անվան զանազան ձևերին հարցեր տալու հմտություն։

ունակությունը (ո՞վ, ի՞նչ. ո՞ւմ, ինչի. ո՞ւմ, ինչի՞ն. ո՞ւմ, ի՞նչ. ո՞ւմից, ինչի՞ց. ումո՞վ, ինչո՞վ. ո՞ւմ մեջ, ինչո՞ւմ) :

3. Նախաղասության մեջ գտնել այն բառերը, վորոնք ցույց են տալիս առարկայի հատկություն, և իմանալ, թե ինչ հարցի յեն նրանք պատասխանում (ի՞նչպիսի, վո՞րպիսի): Հատկություն ցույց տվող բառերի ցանկ կազմել և կապել այն առարկաների անվան հետ, վորոնց կարող են վերաբերել այդ բառերը:

4. Նախաղասության մեջ գտնել այն բառերը, վորոնք ցույց են տալիս առարկայի գործողություն, տալով հետեւյալ հարցերը.— ի՞նչ են անում, ի՞նչ տրավ, ի՞նչ ե անելու, ի՞նչ ես անում և այլն:

Կազմել այնպիսի բառերի ցանկ, վորոնք ցույց են տալիս առարկայի գործողությունը, և կապել այն առարկաների անունների հետ, վորոնց գործողություննեն արտահայտում դրանք:

Շարունակել առաջին դասարանում սովորած մեծատառի գործածության գեղքերը. գիտենալ, վոր քաղաքների, գյուղերի, գետերի, լեռների և փողոցների անունները նույնպես գրվում են մեծատառով:

Վանկ և բառ, տողադարձ.— Շարունակել բառերը վանկերի բաժանելու վարժությունները. գրելիս բառերը լսողությամբ տողադարձ անել:

Հնչյաներ և տառեր.— Հնչյուն և տառ. ձայնավոր և բաղաձայն հնչյուններ. գիտենալ տառերի այրենական կարգը. կարողանալ այրենական կարգով փոքրիկ ցուցակներ կազմել. և-ը վորպես սղագրության նշան. գիտենալ, վոր և նշանը ձայնավորից հետո կամ առանձին գործածելիս յեռահնչյուն (յեվ) վանկի նշան ե, վոր և սղագրության նշանը մեծատառ ձեւ չունի, գրվում է լրիվ տառերով (Յեվ): Գրության և արտասանության անհամապատասխանության գեղքերը, և ձայնավորը տողադարձի ժամանակ:

Հոգնակի եր և ներ վերջավորությունները:  
Ուղղագրական վարժություններ ակ, իկ, իչ, ուիի, և նման մասնիկներ ունեցող բառերով (որինակ՝ փոքրիկ, տնակ, ուսուցչուի, զրիչ, սրբիչ և այլն):

Կարողանալ ոգտվել թե՛ դասագրքի և թե՛ պատի ուղղագրական բառացուցակներից:

Առողանության նշանները. գիտենալ հարցականի, բա-

ցականչականի և չեշտի նշանակությունը բանավոր խոսքի և գրության մեջ, ինչպես և նրանց գործածության պարզագույն գեղքերը:

## ՅԵՐՐՈՐԴԻ ԴԱՍԱՐԱՆ

### Բանավոր խոսք

Արձակ և վոտանավոր գեղարվեստական հատկածների արտասանություն՝ դպրոցական հանդեսներում:

Կարողանալ պատմել կարդացած գրքույկների համառոտ բովանդակությունը և հաղորդել իր տպավորությունները: Կարողանալ ուսուցչի կազմած պլանով հաղորդում կատարել, արտադրական պրոցես նկարագրել, կինո նկարների և բեմադրությունների առանձին տեսարանների բովանդակությունը պատմել:

Կարողանալ լողունդներ կազմել:

Տրված մի քանի բառ հիմք ծառայեցնելով՝ պատմություն կազմել:

Ուսուցչի սկսած պատմությունը և կամ նկարի բովանդակությունը շարունակել և վերջացնել:

Կազմակերպված մասնակցություն ժողովներին՝ հարցեր առաջադրելով, տվյալ թեմայի շուրջը խոսելով, առաջարկներ ձեւակերպելով և այլն:

Կարողանալ աղաստ պատմել լսածի և տեսածի (կինասեանսի, պիեսի և այլն) մասին:

Աշակերտի տեխնիկական բառարանի հարստացում գյուղում՝ կոլտնտեսական մեքենայացված արտադրության, իսկ քաղաքում՝ գործարանի, ուղիոյի և հեռախոսի տեխնիկայի կապակցությամբ՝ պատմություններ, նկարագրություններ և հաղորդումներ կազմելով:

Բառարանային աշխատանիք:— Համանուն բառերի ուսումնասիրություններ և նրանց տարբերության դրսերում նախադասության միջոցով: Հոկտեմբերյան և նոյեմբերյան հեղափոխությունից հետո լեզվի մեջ մտած նոր բառերի և կամ մաստը փոխած հին բառերի ուսումնասիրությունը՝ հետեւյալ որինակով:

1. Նոր բառեր (կուլակ, բատրակ, արտել, կոլտնտեսություն, լենինյան, պիոներ, բանուժ, առաջքաշում, և այլն):

2. Նոր իմաստ ստացած հին բառեր (հարվածային, հընդգամյակ, բջիջ, ճեղքվածք):

3. Բառերի դասակարգային-հասարակական արժեքավորում ու փոփոխություն (բանվոր, չքավոր, ընկեր, ունեոր, անաստված, պարոն, տերտեր) :

### Զեռագրի ուսուցում և պարզ խոսք

Շարունակել մաքուր, գեղեցիկ և կանոնավոր գրելու լարժությունները: Գրի առնել դասարանում նախորոք մշակված հոդվածների համառոտ ծրագիրը:

Ուսուցչի ոգնությամբ մի քանի պարզ նախադասություններով որպես կազմել և գրի առնել յուրաքանչյուր որվա աշխատանքներն ու բնության դիտողությունները:

Գրավոր պատասխանել նախորոք մշակված պարզ հարցերին. շարադրել նախորոք կազմված գրավոր ծրագրի համաձայն: Քերականական գրավոր վարժություններ կատարել:

Գիտակցական-արտապրություն, դիտողաբացատրական թելադրություն և շարադրություն՝ նյութ ծառայեցնելով պասադրքի հոդվածները, նկարները, եքսկուրսիաների տպավորությունները, բնության տեսարանները, պարզ գիտական թեմաները և այլն:

Պարզ թեմաների չուրջը ինքնուրույն փոքրիկ շարադրություններ գրելու ունակություն (պատմել այնպիսի դեպքերի մասին, վորին մասնակից և յեղել աշակերտն ինքը կամ նրա մերձավորներից մեկը): Մշակված հարցերի համաձայն շարադրություններ գրել (ուսուցչի ոգնությամբ):

Անկետա լրացնել, նամակ և ստացական գրել, պատիլրարին նյութեր և փոքրիկ հոդվածներ տալ: Գրավոր շարունակել միևնույն թեման ընդդրկող մի շարք նկարների բովանդակությունը, նկարների բովանդակության ստեղծագործական լրացում (ի՞նչ կարող ե պատահած լինել նկարում ցուցադրված դեպքից առաջ և ի՞նչ կարող ե լինել հետո):

### Ընթերցանություն

Դասագրքի հոդվածների արտահայտիչ ընթերցում ճիշտ առողջանությամբ. վոտանավորներ անդիք անել. ուսուցչի ցուցումով դյուրըմբունելի փոքրիկ բրոշյուրներ և «Հոկտեմբերիկ» մանկական հանդեսի ու մանկական գրքերի ինքնուրույն ընթերցանություն. զրույց կարդացածի շուրջը (ի՞նչ գիրք ե ընտրել աշակերտը, ընկերոջն ի՞նչ գիրք ե հանձնարարում կարդալ, վո՞ր գիրքն ե իրեն դյուր յեկել):

Դյուրընթեռնելի ձեռագրերի ընթերցում (նամակ, գործնական գրություններ):

Գրքով աշխատանք կատարելու խորացում (տիրած, իրատարակչություն, վայր, տարեթիվ, ցանկ, առաջարան):

Ծանոթություն «Պիոներ կանչ»-ին. լրագրային նյութի ոգտագործման նախական պրիորներ (ինչպես գտնել նյութը և գտածն ինչպես ոգտագործել):

Լուս կարդալու ունակության զարգացում. լուս կարդալով նախաղատրաստվել բարձր որինակելի ընթերցանության և հոդվածի բովանդակության կոլեկտիվ քննության: Դերերով կարդալ. կարողանալ հոդվածը մասերի բաժանել և պատմել նրանց բովանդակությունը. հոդվածի ծրագիրն ըստ հարցերի կազմել, տրված հարցերին բնագրում համապատասխանող հատվածներ գտնել. հոդվածում գտնել այնպիսի հատվածներ, վորոնք համապատասխանում են ուսուցչի արահայտած այս կամ այն մտքին:

Կարողանալ նշել և հարցնել անհասկանալի և անծանոթ բառերը և արտահայտությունները:

Ծանոթություն գրվածքի տեսակներին (արձակ և չափածո):

### Քերականություն և ուղղագրություն

Նախաղասության վերլուծությունն ըստ բովանդակության և անդամների կապակցության. նախաղասություն կառուցելն ու վերլուծելը, կապված բանավոր խոսքի մշակման աշխատանքների հետ:

Ծանոթություն համպոտ նախաղասության և նրա անդամներին, վորոնք կազմված են ո՞վ կամ ի՞նչ հարցերին պատասխանող բառից (յենթակայից), ի՞նչ և անում կամ լինում հարցերին պատասխանող բառից (ստորոգյալից). համառոտ նախաղասություններ կառուցելու վարժություն. յենթակայի և ստորոգյալի համաձայնությունը դեմքով և թվով. նախաղասության մեջ տուարկա ցույց տվող բառերը ճանաչել (իրեր, մարդիկ, յերեսութներ և այլն). զրել, թե ի՞նչ հարցերի յեն պատասխանում դրանք (ո՞վ, ի՞նչ, ո՞ւմ, ի՞նչի՞ և այլն):

Ծանոթություն ընդարձակ նախաղասության. գաղափարը լրացումների մասին. տերմինալորիված գաղափար գոյական անվան մասին. հատուկ և հասարակ անուն. մեծատար:

ոի գործածության բոլոր գեպքերը. գոյականների թիվը՝ վորչող հողը՝ ը կամ ն և նրա գործածությունը։ Դիտել գոյականի ձևերն՝ իրեւ յենթակա և իրեւ լրացում գործածվելու ժամանակ։ Գաղափար ուղղական հոլովի մասին՝ յենթակայի կապակցությամբ։ Հարցերով սովորեցնել մնացած հոլովները (սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական և ներզայական)։ Նախադասության մեջ գտնել առարկայի հատկություն ցույց տվող բառերը. ծանոթություն ածականներին։

Նախադասության մեջ գտնել այն բառերը, վորոնք փոխարինում են դոյականին. անձնական գերանուններ՝ յես, դու, նա, մենք, դուք, նրանք։

Ստորոգյալի արտահայտումը գործողություն և դրություն ցույց տվող բառերով. գաղափար բայի մասին. բայի խոնարհումը, բայի գեմքը և թիվը, յենթակայի գործողությունը կամ դրությունը ժամանակի կապակցությամբ՝ ներկա, անցյալ, ապանի։ Գաղափար բայի խոնարհման բացասական ձևերի մասին։ Գաղափար բայի հրամայական ձևի մասին՝ «մի» արդելականը. ուղղագրություն։ Գաղափար բայի անորոշ ձևի մասին։

Նույնանիշ և հականիշ բառեր։

Գաղափար արմատի և ածանցի մասին. ոլարդագույն բառերի ոգնությամբ պարզ և բարդ բառեր։

Կարողանալ ոգտիել ուղղագրական ավելի մեծ բացացուցակներից։ Յ ձայնակապի գործածության վերաբերյալ ուղղագրական վարժություններ (այս, այո, այու և ային)։

Յ-ով յերկհնչյուն ունեցող բառերի ուղղագրությունը (յա, յու, յո և այլն)։

Ը ձայնավորը բառասկզբում և սկ, սպ, ստ, սր, սփ, զգ, շր, զր կապակցություններից առաջ. ը ձայնավորը բառապերում։

Ոժանդակ բայը դերբայից անջատ գրելու վարժություններ։

## ԶՈՐՌՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Բանավոր խոսք

Կատարված եքսկուրսիայի, փորձի, այս կամ այն աշխատանքի և կարդացած գրքի մասին նախադասությամբ հա-

ղորդում կատարելու ունակություն։ Ստեղծագործական սպատմվածք. փորձել պատմել, թե ի՞նչ է նախորդել տվյալ դիպվածին կամ պատմվածքում հաղորդած անցքին. ինքնուրույն ստեղծագործական շարադրանքի փորձ (իր սեփական կյանքից, իրեն չըջապատող մարդկանց կյանքից և կամ հասարակական անցքերից). մասնակցություն դպրոցական բեմադրություններին և հանդեսներին. կարողանալ պատմել կարդացած գրքերի համառոտ բովանդակությունը և իր տպավորությունները. դասարանում կարդացած հոգվածի բովանդակությունը կապակցված պատմելու ունակություն։ Աշակերտական աշխատանքների ցուցահանդեսին, դպրոցական տոններին և եքսկուրսիայի ժամանակ բացատրություններ տալու համար նախադասությելու ունակություն։

Նկարներով աշխատանիք։ Նկարների բովանդակության վերապատմումը՝ յեղբակացություններով և ընդհանրացումներով. նկարների վերապատմում՝ գեղարվեստական մանրամասնություններ հաղորդելով. պատմել, թե ի՞նչ կարող եր նախորդել նկարում ցույց տված անցքին և ի՞նչ կարող ելինել նրա շարունակությունը. նկարի բովանդակությանը բանման այլ պատմություններ հորինել։

Բառարանային աշխատանիք. — Ուղղակի և փոխարերական խմասով գործածվող բառեր. այդ բառերով նախադասություններ կազմել. Համեմատիչ և փորչիչ բառերի ուսումնասիրություններ. գաղաքական և գիտատեխնիկական տերմիններ; Նրանց նշանակությունը մեր խոսքի մեջ. կարողանալ զյուղատնտեսական մեքենա նկարագրել՝ գործածելով պահանջված տերմինները։

Զեռագրի ուսուցում և գրավոր խոսք

Ավելի արագ և ազատ, ավելի մաքուր ու պարզ գրելու վարժություն թե՛ մի տողանի և թե՛ յերեմն անտող թղթի վրա։

Պատմվածքի, զրույցի, եքսկուրսիայի և այլ ինդիքների մասին գրելիք շարադրության պլան (սկզբում ուսուցչի ողնությամբ, ապա ինքնուրույն կերպով) կազմել և ապա շարադրություն գրել։ Ուղղակի խոսքն անուղղակի խոսքի վերածելու վարժություն։

Կապակցված կերպով գրել իր համառոտ կենսագրու-

թյունը և իր առաջիկա անելիքները։ Կարողանալ գրավոր շարադրել հողվածի հիմնական միտքը։

Ինքնուրույն շարադրություններ գրել մատչելի թեմաների շուրջը։ Նախնական մշակումից հետո համառոտ հաշվետվություն՝ կատարած աշխատանքի մասին։

Ընտրած թեմայով ինքնուրույն պարզ նկարագրություններ գրել ուսուցողական և ստուգողական թելադրություն։ Բանաստեղծությունների և արձակի գեղեցիկ կտորների արտադրություն։

Յ-րդ դասարանում սովորած պորձնական նշանակություն ունեցող ավելի բարդ գրությունների վարժություններ (գիմում, հեռագիր, հայտարարություն, հասցե, անկետա և զբամի փոխադրագիր)։

Մասնակցել պատի թերթի աշխատանքներին։ Թղթակցել մանկական թերթին (հողված, նամակ, լուր, տեղեկություն և այլն)։

## Ընթերցանություն

1. Տպագիր և ընթեռնելի ձեռագիր տեքստերի բարձր ընթերցանություն։ տեքստն ընթերցելու ժամանակ մտքի առանձին յերանգավորումներն ընդգծելու ունակություն։

Գեղարվեստական յերկի արտահայտիչ ընթերցանության նախնական ունակություններ։ Հրապարակով ընթերցում կատարելու համար նախապատրաստվելու ունակություն։

Գրքով աշխատելու ունակություններ։ ուսուցչի առաջադրանքով կամ իր սեփական ընտրությամբ լուր կարդալու և կարելոր տեղերը գրանցելու հմտություն։

Գիրքը մասերի և գլուխների բաժանելու հմտություն։ կարողանալ կարդացած հատվածի համար ինքնուրույն կերպով վերնագիր հնարել։ կարողանալ կարդացածը բաժանել մասերի, յուրաքանչյուր մասը վերնագրել, կազմել կարդացածի պլանը։

Պատմվածքի մեջ գտնել գլխավոր և յերկրորդական եպիզոդները, գտնել նրանց մեջ յեղած կապը. գիտենալ, թե ո՞վ քեր են գլխավոր գործող անձերը և կազմել նրանց պարզ ընտթագրությունները (նկարագրել նրանց արտաքինը, բնավորության գլխավոր գծերը. նշել հեղինակի վերաբերմունքը

դեպի նրանց, հասկանալ գլխավոր գործող անձերի դասակարգային պատկանելությունը)։

Անդիր արած վոտանագորների և արձակի գեղարվեստական փոքրիկ հատվածների արտահայտիչ արտասանություն և ընթերցանություն։

Զբույց արտադրոցական ընթերցանության մասին. դրադարան հաճախելը, թեմատիկ գրացուցակների ոգտագործումը, միևնույն թեմայի շուրջը տարբեր գրքերի ընթերցանություն, այդ գրքերի համեմատությունը ընդհանուր թեմայի շարադրանքի տեսակետից (գիրքը թեմայի վո՞ր հարցերի շուրջն ե խոսում, վո՞րքան ճիշտ ե խոսում, ի՞նչ ոգուտ կարող ե տայ)։

Ուսուցչի ցուցումով գրքերի ինքնուրույն ընթերցանություն, արտագրելով հետաքրքրական կամ հարկավոր կտորները։

## Քերականություն

Նախադասության մասին անցածի կրկնությունը։

Պատմողական, հարցական և բացականչական նախադասություններ։ Այդ նախադասությունների ինտոնացիան և կետադրությունը։

Յ-րդ դասարանում ընդարձակ նախադասության մասին անցածի կրկնություն։ Ծանոթություն լրացման լրացումներին. լրացման լրացումներ ունեցող նախադասության իմաստը (մտքի ե'լ ավելի ամբողջացում)։

Ծանոթություն հրամայական նախադասություններին։ Կոչական բառերը և նրանց արժեքը նախադասություն մեջ։

Մի քանի յենթակա և կամ մի քանի սատրողակալ ունեցող նախադասություններ և մի քանի հօմագաս լրացում ունեցող նախադասություններ։ նման նախադասությունների արտահայտիչ ընթերցանություն. նախադասության մեջ բայց գործածություն այդ գեպքում։

Նախնական ծանոթություն բարդ նախադասությանը (յերկու պարզ նախադասության միացումը մի ամբողջական բարդ նախադասություն ստանալու համար)։

Տարրական և պրակտիկ ծանոթություն ուրիշի խոսքին. չակերաների և զի գործածությունը։

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ

Գոյականների մասին անցածի կրկնություն. ի և ու ՀՇ  
լովումներ:

Ածականների մասին անցածի կրկնությունը. վորտկակա՞  
և հարաբերական ածականներ, ածականների ածանցներ. ակ  
իկ, ային, ական (ցամաքային, հասարակական):

Անձնական և հարցական (միայն ո՞վ և ի՞նչ) դերանուն  
ների հոլովումը. ստացական դերանուններ. գաղափար ստա  
ցական հոդերի մասին:

Թվական. քանակական և դասական թվականներ. 1, 2,  
3, 4 . . . և I, II, III, IV . . . թվականների ուղղագրու  
թյունը:

Բայերի մասին անցածի կրկնություն. գաղափար անո  
րոշ, անկատար և ապառնի դերայների մասին: Ծանոթու  
թյուն ոժանդակ բային: Խոնարհում՝ ներկա, անցյալ ան  
կատար, ապառնի և անցյալ կատարյալ ժամանակներով.  
Հրամայական չեղանակը և նրա ուղղագրությունը:

Ծանոթություն կապերին:

Շաղկապները և նրանց գործածությունը:

Բառակազմություն. բարդ բառեր. ա հոդակապը յե՞ր  
և դրվում և յե՞րբ չի դրվում:

Հնչյունափոխություն. ու և ի ճայնավորների փոխվելն  
ը-ի (ջուր-ջրաղաց, կիր-կրաքար) կամ բոլորովին զեղչվելը  
(ամիս-ամսավերջ, անասուն-անասնապահ):

Ածանցակոր բառեր, նախածանցներ՝ ան, ապ, դժ, տ,  
չ, գեր, արտ և այլն վերջածանցներ՝ ոտ, ոց, արան, ստան,  
եղեն, և այլն. ածանցները փոխում են բառի իմաստը՝ նրան  
ուրիշ վորակ տալով (ածուխ առարկա յե ցույց տալիս, իսկ  
ածխային՝ հատկություն):

Քերականական և ուղղագրական գիտելիքների ամփո  
փում, լրացում և սիստեմավորում: Քերականական վերլու  
ծության վարժություններ:

Ուղղագրական վարժություններ. ո և թ, զ և խ, ֆ և կ,  
դ և թ, զ և չ, ձ և ց տառերի ուղղագրությունը:

Գրավոր աշխատանքների ժամանակ բառագրքույկից ոգ-  
տրվելու վարժություն:

Ուղղագրական տետրակ պահել, նշանակելով այնտեղ  
այն բառերը, վորոնց գրությունը գժվար ե:

Յուցակ 3-րդ և 4-րդ դասարանների համար  
Անող սերնդի կոմունիստական դաստիարակության գոյր-  
ծում հսկայական նշանակություն ունի զեղարվեստական  
գրականությունը: Բանաստեղծությունների և պատմվածք-  
դրականությունը, գեղարվեստական արձակի վերա-  
պատմումը, անդիր անելը՝ այս բոլորը պետք ե ընդարձակի  
յերեխանների մտահորեղունը, մի շարք կոնկրետ պատկերներ  
առ թե՛ անցյալից և թե՛ ներկայից ու հարստացնի նրանց  
բառապաշարը:

3-րդ և 4-րդ դասարանների ծրագրի մշակման արդյունքն  
այն պետք է լինի, վոր յերեխանները յուրացնեն գրականա-  
գիտության հետեւյալ տարրերը.

1. Հասկանալ զեղարվեստական յերկերի տեքստը:  
2. Տարրական ծանոթություն տալ զեղարվեստական  
յերկի իդեալական և զեղարվեստական արժեքի մասին:  
3. Կարողանալ տարրերել զեղարվեստական յերկերի վո-  
րոշ սեռեր (ժանրեր)՝ պատմվածք, բանաստեղծություն, ա-  
ռակլ, հեքիաթ:

4. Գեղարվեստական լեզվի առանձնահատկությունները  
տարրական կերպով յուրացնել տալ (ածականներ, համեմա-  
տություններ, ալեգորիաններ):

5. Տարրական գաղափար տալ դրականության դերի ու  
նշանակության մասին, հասարակական կյանքում և մասնա-  
կիրապես սոցիալիստական շինարարության գործում:

3-րդ և 4-րդ դասարանում մշակման համար դրական  
նյութ ընտրելիս պետք ե առաջադրվեն հետեւյալ սկզբունք-  
ները.

ա) յերկի իդեոլոգիական և զեղարվեստական արժեքը.  
բ) տեքստի լեզվական արժեքը.

4-րդ դասարանում նյութերը տրվում են պատմականու-  
թյան սկզբունքով:

3-րդ դասարան

Հայ գրողներ

1. Աղայան Ղ.— Ամառը (վոտ). Յերկու ընկերներ (ար-  
ամել):

2. Անանյան Վ.— Վոչ մի գայլ մեր հանդերում (համ-

- ված). «Կարմրախայտի վորսը» («Կրակե ողակի մեջ» վեպից) :
3. Արմեն Մ.—Պատմվածք տրամվայի մասին (կրճ.):
  4. Բակուց Ա.—Նամակ ուստաց թագավորին (վերջին մասը):
  5. Արագի. — Լույսերը (հատվածներ):
  6. Դարբինյան Մ.—Փռքրիկ լուիզայի մահը:
  7. Դեմիրնյան Դ.—Քարհատները (հատված):
  8. Զարյան Ն.—Ալեքսանի վերադարձը, Սերմի զտումը (հատ. «Ռուշ. քարափը» դրվածքից):
  9. Թումանյան Հ.—Կաքավի յերգը, Գելը, (յերկու հատված), Զարի վերջը, Սուտիկ վորսկանը, Հսկան:
  10. Զորյան Ա.—Կարմիր արագիլը (սկիզբ սղմել):
  11. Թոքովենց Վ.—Լառ-Հոտ:
  12. Խնկոյան Ա.—Ազուակն ու աղվեսը, Կկուն ու աքլորը, ձպուռն ու Մրջյունը, Մկների ժողովը, Գայլն ու չները:
  13. Հակոբյան Հ.—Աշխատանքի յերգը, Կաթսավար:
  14. Սամվելյան Մ.—Զրանցքի բացումը («Անապատը հծաղկի» վեպի վերջին մասը):
  15. Միքայան Վ.—Գառը մեր տալիս:
  16. Մեսյան Գ.—Վասիլ աղան (կրճ.):
  17. Մահարի Գ.—Կոմունան:
  18. Նորենց Վ.—Գարուն:
  19. Զարենց Յե. — Ընկերները, Լենին քեռին (կրճ.):
  20. Պռոշյան Պ.—Գարնան դալը:
  21. Սարյան Գ.—Բերքի յերգը:
  22. Վշտունի Ա.—Փռքրիկ լրագրավաճառը:
- Ուստի կլասիկ և խորհրդային գրողներ
1. Գալինա. — Հասանը:
  2. Գարշին Վ. — Թշնամիները:
  3. Գրուգոնի Մ.—Գորկու կյանքն ու արկածները (յերկու հատված):
  4. Գորկի Մ.—Պարմա քաղաքի յերեխաները:
  5. Զամոյսկի. — Նամակ Լենինին (հատված):
  6. Զորիչ. — Ռողիզ ժամը 4-ին:
  7. Իլին. — Մեծ պլանի մասին:
  8. Կասսիլ. — Հեքիաթ Բելոմոր պապի և Ալյոշա Այազանի մասին:

9. Նեվերով. — Միշկա Դողոնով (հատված):
10. Շկուեվ. — Մենք դարբիններ ենք:
11. Շոլոխով. — Շչուկար պապի մանկությունը («Հերկած իռապան»):
12. Ռույանը. — Լենինի մանկական և դպրոցական տարիները (հատված):
13. Չեխով. — Վանկա Ժուկով (կրճ.):
14. Տոլստոյ. — Յերկու պատմվածք կենդանիների մասին:

Ուստի գրողներ

1. Դոդե Ա.—Կորնել պապի գաղտնիքը (կրճ.):
2. Հյուզոն Վ.—Բարիկադի վրա:
3. Մետանո-Տոման. — Առնո (կրճ.):

#### 4-րդ դասարան

##### ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

(Նախախորհրդային և խորհրդային)

1. Աքնվյան Խ.— (Համառոտ կենսագրական տեղեկություններ). »Ամառը Յերևանում», «Ձմեռը»:
2. Պռոշյան Պ.— (Համառոտ կենսագրական տեղեկություններ): «Մեր տեսուչը»:
3. Աղայան Պ.— (Համառոտ կենսագրական տեղեկություններ). «Տորք Անդեղ» (հատված):
4. Շիրվանզադե. — (Համառոտ կենս. տեղեկություն). «Հրդեհը նավթագործարանում» (կրճ.):
5. Թումանյան Հ.— (Համառոտ կենս. տեղեկություններ). Սասունցի Դավիթը (կրճ.), Գիգոր, Գութանի յերգը, Ահմեղը, Գարու բիծու չերամապահությունը, Իմ ընկերնեսոն, Գելը, Տերն ու ծառան:
6. Մուրացան. — Մոսինի գալրոցը:
7. Նար-Դոս. — Թե ինչ յեղափ. . . . (հատված):
8. Փափազյան. — Արտը:
9. Ճուղյուրյան. — Զատոյի բախտի անիվը (հատված):
10. Միքայել. — Քոչը:
11. Ծատուրյան. — Բանվորուհու որորը:
12. Հակոբյան. — Մեկ ել, մեկ ել, 26-ի յերգը, Ետապը, Լուսաբացին, Գարնանամուտը:
13. Տերյան. — Գարնանամուտ, Նոր կյանք:

14. Դեմիրնյան. — Մերկե (Հատված) :
15. Զարեւուց. — Գարունը մի հոկտեմբերիկի:
16. Վշտունի. — Մայիսական, Լենինին:
17. Խնկոյան. — Գայլն ու գառը:
18. Զորյան. — Զալանկը, Ծովանը (Հատված) :
19. Բակունից. — Ծիրանի տափ, Զորբան:
20. Զարյան. — Վեճ կոլխոզի մասին, Սևանի տունը:
21. Ալազան. — Զանգույի յերգը, Հեղուչեն, 60-րդ հորիզոնում, (Հատվածներ):
22. Արմեն. — Արևը, Հուրդան արևը:
23. Տարունից. — Աքաղաղներ, իմ բալիկին:

Ուստի կլասիկ և խորիութային գրականություն

1. Բեդնիյ Դ. — Մինչեւ եստեղ:
2. Գարշին Վ. — Աղդանշան:
3. Գորկի Մ. — Հունվարի 9-ը, Սիմվլոնի տոնելը, Մայիսի 1-ը, Պետք:
4. Խաբախ Ս. — Լենինն ու Լի-Զանը (Կրճ.):
5. Պոլումորդվինով. — Զրանցքի բացումը:
6. Կանախիձե. — Որերը գյուղում:
7. Կրուպսկայա. — Հիշողություններ Լենինի մասին (Հատված):
8. Շոլովով. — Ծերունիները Դավիդովի մոտ («Հերկած խոպան», Հատված):
9. Ուլյանովա. — Լենինի մանկ. և դուր. տարիները (Հատված):
10. Զեխով. — Կաշտանկա (Կրճ.):
11. Զվիանի. — Ալազանի գաշտն ու բամբակը:
12. Պուշկին. — Զմրան գիշեր, Կալանավորը:
13. Վլադիմիրսկի. — Զմրուխտի հանքը, Վանիայի մահը:
14. Տուրգենև. — Գյուղացիների դատը:
15. Քուչիշվիլի. — Իվանեն:
16. Մեհու. — «52»:

ԱՐՏԱԴՊՐՈՅԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱԿ

### 3-րդ դասարան

1. Ագնիվցեվ. — Հեքիաթ Կոմինտերնի մասին:
2. Ալազան. — Խորհուրդների համար:
3. Անանյան. — Վորսը:
4. Գարշին. — Արջերը:
5. Դանցիգեր. — Թե Վանյան ինչպես դարձավ ողաջու:
6. Դիմիտրովա. — Մանչուկն ու կուտիկը:
7. Զամոյսկի. — Նամակ Լենինին:
8. Զորին. — Ինչպես Պետիկը Լենինի մոտ գնաց:
9. Թոքովենց. — Լառ-Հուզու:
10. Թումանյան. — Արջավորս, Գելը (լրիվ):
11. Մայակովսկի. — Ինչ դառնալ:
12. Մանուկյան. — Գելի խաղը:
13. Մինգել. — Կրասինը սառույցների մեջ:
14. Միտչել. — Ինչով կարելի յէ ճամբորդել:
15. Նորենց. — Կարմիր հերոսը:
16. Նեվերով. — Ինչպես եյին ապրում տիկնիկները:
17. Շվարց. — Յերեք Հանդիպում:
18. Պուշկին. — Վոսկե ձկնիկը:
19. Պիտրովսկայա. — Մեր վագրիկը:
20. Լոռ. — Զինաձետեր:
21. Սերիկ. — Միխել: Անվախ տղան:
22. Մամին-Սիբիրյան. — Վորդեղիրը:
23. Սլիվիցկի. — Խորամանկ աղվես:
24. Որլովեց. — Ճամբորդություն այերոպլանով,
25. Ույդ. — Հերոսուհի Պալման:
26. Տարոնից. — Աստղափուշը:
27. Նովիկով-Պրիբոյ. — Խաղի պատճառով:
28. Մարշակ. — Այլ քեզ ցրված մարդ:
29. Սվիֆտ. — Գուլիվերը լիլիպուտների մոտ:
30. Տոլստոյ. — Պատմվածքներ կենդանիների մասին:

### 4-րդ դասարան

1. Անանյան Վ. — Կրակե ողակի մեջ:
2. Առաջեներ. — Փոքրիկ Խոն:
3. Գարբինյան Ռ. — Ովկիանի թագավորը:
4. Գարշին. — Զորս որ պատերազմի դաշտում:

5. Դոդե.— Գեղեցիկ Նիվերնեղա:
6. Դորոխով.— Բոլշեկիկի տղան:
7. Գումիլեվսկի.— Մամոնտների գերեզմանը:
8. Դուրգարյան Մ.— (կազմող) Պատանի հեղափոխականներ:
9. Թումանյան Հ.— Գիքորը:
10. Լեռնի.— Յերաժիշտ Դանիկը:
11. Խավիճ.— Նավթ:
12. Կիպիհնիզ.— Ռիկի-Տիկի-Տավի:
13. Կորուենիոն.— Գետնափորի յերեխաները:
14. Կուտյուրե.— Ժան անհաց:
15. Հյուզո Վ.— Գալրոշը:
16. Մուլտատուլի.— Սայիդ և Ալինդա:
17. Նազարով.— Յերեխաներն ինչպես ավտոմոբիլ վարել սովորեցին:
18. Զարեց.— Մաճկալ Մաքոյի պատմությունը:
19. Զեխով.— Կաշտանկա:
20. Պիսկունով.— Գիգանտ:
21. Պակրովսկի.— Ջնդարկա:
22. Սենկեվիչ.— Յերաժիշտ Յանկոն:
23. Ստակովսկի.— Պատիկ նավաստին:
24. Վլադիմիրսկի.— Զմրուխտի հանքը:
25. Տուրգենեվ.— Մումուլ:
26. Որլովեց.— Քիմիկոս Կուզկան, Պետիկի գիրը:
27. Ֆոքս.— Մինիստր մեկ ժամով:
28. Ույդ.— Փոքրիկ հերոսուհին:
29. Ռասպի.— Մյունխառուգենի արկածները:
30. Գերշենսոն.— Լենիկ սարը:
31. Պանելեև.— Ծրար:
32. Բախանովսկայա.— Քրիստափոր Կոլումբոս:
33. Ալազան.— Թղթի և արձիձի հերոսները:
34. Մետոն-Տոմասոն.— Արծաթ Պեծիկը:

## ԳԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Բացատրական

ԳԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՍՈՍՁԻՆ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ

1. Հիմնական պրիումների նշանակությունը գրելու ժամանակ— նատելը, մատների, դաստակի նիշտ շարժումը

Զեռագրի ուսուցման գործում գլխավորը հանդիսանում է գրության ժամանակի յերեխայի ճիշտ (կանոնավոր) նստելը և մատներն ու դաստակը շարժելու տեխնիկային տիրապետելը: Մեր այբբենի բոլոր տառերն ըստ եյության շատ տարրերից չեն բաղկացած: Յեթե այդ տարրերն ուսումնասիրված են այն աստիճան՝ վոր աշակերտները կարող են գրել համարյա մեքենայորեն՝ ապա գրանով ել հենց նրանց մեջ ամրապնդվում ե կանոնավոր ձեռագրի ունակությունը: Դյուրընթեռնելի և գեղեցիկ ձեռագրի գլխավոր հատկանիշներն են.՝ ա) տառի և տառերի գծերի զուգահեռականությունը, բ) նրանց միջև յեղած տարածության միանմանությունը, տառերի հիմնական մասերի համաչափությունը, հավասար մեծությունը, թեքությունը և այլն: Այսպիսի ձեռագրի հմտություն ձեռք ե բերվում միայն մարմնի ճիշտ դիրքի և մատների ու դաստակի ութմիկ շարժման հետևանքով:

2. Զեռագրի ուսուցման կանոնները

Դեռ մինչև գրությանն անցնելը դասասուն պետք է յերեխաներին բացատրի այն բոլոր տարրական կանոնները, վորոնք անհրաժեշտ են գրության ժամանակ կիրառելու համար: Դրանք են՝

Ա) Գրագոր աշխատանքի ժամանակ գրողի վոտքերն իրենց ներբանով պետք է ամուր հենված լինեն հատակին կամ նստարանի ամրափայտերին:

Բ) Իրանը պետք է պահել ուղիղ դիրքով, իսկ կուրծքը չպետք է կպցնել սեղանին (իրանը սեղանից 5 մմ հեռավորության վրա պետք է գտնվի):

Գ) Գլուխը պետք է աննշան թեքում ունենա դեպի սեղանը, վորպեսզի հնարավոր լինի գրածն ազատ կարդալ: Պետք է այնպես նստել, վոր աչքերը գրչածայրից 25—30 մմ հեռավորության վրա գտնվեն:

Բացի այս, անհրաժեշտ է զարդացնել գլուխն ուղիղ դիրքով պահելու և դեպի կողմերը կամ դեպի ցած թեքելու ունակությունը:

Դ) Գրողի արմունկները չպետք է ամբողջությամբ ընկեննեն սեղանի վրա, այլ պետք է շատ քիչ դուրս յեկած լինեն սեղանի յեզրից և ձեռքի լայնության չափով հեռու գրողի իրանից:

Ե) Գրչակոթն իր ծայրով պետք է բռնել յերեք մատով՝ բութ մատով, ցուցամատով և միջամատով: Բոլոր յերեք մատներն ել պետք է լինեն թեթև կորացած ու հանդիսա վեճակում և հոգնածությունից խուսափելու նպատակով՝ գըրչակոթը խիստ չպետք է սեղմեն:

Յուցամատը պետք է վերևից պառկած լինի գրչակոթի վրա, միջին մատը գրչածայրը պետք է պահի աջից, իսկ բութ մատը՝ ձախից: Մյուս յերկու մատները (ձկութն ու մատնեմատը՝ անանունը) ծառայելու յեն դաստակին վորպես հենարան և պետք է թեթև կերպով շփվեն թղթին ու հեշտությամբ սահեն նրա վրայով: Գրչակոթը պետք է ընկնի զրողի աջ ուսի դիմաց:

Զ) Տեսրակն այնպես է գրվում գրողի կրծքի դիմաց, վոր նրա աջ անկյունն ավելի բարձր լինի ձախից:

3. Նախնական վարժությունների տեսակները և նրանց նշանակությունը գրության կանոնավոր տեխնիկայի զարգացման համար

Գրության գործողությունը հետևյալն է. տառերի գծերը գրում են գրիչը բռնող մատները փակելու և բաց անելու միջոցով. գիծը քաշվում է նախառաւսի և մատնեմատի ու ձկութի վրա հենված դաստակը ձախից դեպի աջ շարժելով: Բոլոր այս ձեռները շատ պարզ են, սակայն յերեխաները դըրքարությամբ են կատարում, մանավանդ յերբ գրության ուսուցումն անմիջապես տառերի գրությամբ և սկսվում:

Այս առաջանում է նրանից, վոր յերեխաներն ստիպված են միանգամից հաղթահարել մի քանի դժվարությունն. հետևել իրենց մարմնի դիրքին (կեցվածքին), տեսրակի դիրքին, գրչակոթը բռնելու ձևին, մատների, նախառաւսի և գաստակի աշխատանքներին և միևնույն ժամանակ գրել անձանոթ տառի ձևը: Նախնական վարժությունների գրությունը խոչը չափով հեշտացնում է աշակերտների աշխատանքում և նպաստում է կանոնավոր ու պարզ ձեռագրի ունակությունների մշակելուն: (Վարժությունների կարգը տես ծրագրում): Այս վարժությունները պետք է կատարվեն հետեւյալ ձևով:

ա) ուսուցիչը բացատրում է վարժության բնույթը և նրա նպատակադրումը.

բ) ուսուցիչը ցույց է տալիս մատների, դաստակի և նախառաւսի այնպիսի հետեւողական շարժումներ, վորոնք և նշանակության համար.

գ) յերեխաներին սովորեցնել ձեռքը կանոնավոր շարժել.

դ) գրության մեջ նկատած պակասություններն ուղղել.

ե) աշակերտությանը գրել տալ՝ համրանքի տակ:

Այսպիսի վարժությունները պետք է կիրառվեն վոչ միայն գրության ձեռների նախնական ուսուցման ժամանակ, այլև ամբողջ առաջին դասարանի ընթացքում և յերկրորդ դասարանում: Այս վարժությունները լավ մարզանք են հանդիսանում մատնեցի համար:

Գրության ուսուցման յուրաքանչյուր դասին գրության նախնական վարժություններին հասկացվում է 5 ընդելից վոչ ավելի:

#### 4. Տառի և բառի գրությունը դասարանում

Տառերի և բառերի գրությունը պետք է անցնել այն հաջորդականությամբ, ինչպես վոր այն տրվում է գրագիտության դասերին: Բայց վորպեսզի տառի գծագրությունը պատկերը ճիշտ ուսացվի, ուսուցիչը պետք է շատ հանգամանորեն և պատկերավոր կերպով բացատրի տակերտներին, թե ի՞նչպես է գրվում ուսումնասիրվող տառը, ի՞նչ մասերից են նա բաղկացած, ի՞նչն է առաջ գրվում, ի՞նչը հետո, վո՞րտեղից պետք է սկսել, վո՞րտեղ վերջացնել, ի՞նչ պես միացնել տառի մի գիծը մյուսի հետ, ի՞նչպես միացնել

մի տառը մյուսի հետ և այլն: Բացատրելով տառի առանձին տարրերը, ապա տառերն ու բառերը գրելու ձևերը, ուսուցիչը պետք է այս բոլորը կավճով խոշոր, պարզ և գեղեցիկ պատկերի գրատախտակի վրա:

Աչա գրության այդպիսի ուսումնասիրության մեկ որենակ.

ա) դաստուն գրատախտակի վրա գրում և ուսումնապերելք բառը.

բ) բաժանում և այդ բառը տառերի և գրում և այն գրատախտակին.

գ) բաժանում և յուրաքանչյուր տառ իր բաղկացուցիչ տարրերի և գրում և գրատախտակին.

դ) առանձնացնում և այն տարրերն ու տառերը, վորոնց գրությունն աշակերտները դեռ չեն սովորել.

ե) աշակերտները հետևողականորեն վարժվում են այդ տարրերի և տառերի գրության մեջ:

Յերեխաները գրում են տառերի տարրերն ու բառեր և դաստուն յուրաքանչյուր սխալն ուղղում և տետրակում: Ռւղղումից հետո յերեխաները նորից են մի տող գրում:

Առանձին տարրերի և տառերի գրությունը շատ չպետք է լինի. միջին հաշվով յուրաքանչյուր վարժություն 3 տորից ավելի չպիտի լինի:

Հետագայում, ունակությունների ամրացման զուգընթաց, այդպիսի վարժությունների քանակը պետք է այնպես կրծատվի, վոր անմիջապես հնարավոր լինի անցնել բառի գրության:

Ակզրում տառի և բառի տարրերն աշակերտները պետք է գրեն դանդաղ, իսկ ապա նրանց կանոնավոր գծադրությունը յուրացնելու և գրության ձևերի ամրապնդման զուգընթաց՝ հետզհետե կարելի յե գրության տեմպն արագացնել:

### ԳԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՐԿՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ

Յերկրորդ դասարանում գեղագրության առաջին և հիմնական աշխատանքն է հանդիսանում գլխագիր տառերը կանոնավոր գրելը, առաջին դասարանում ձեռք բերած կանոնավոր ձեռագրի ունակությունների ամրապնդումը և տառերի՝ ընդունած գծադրության նկատմամբ յեղած անհատական չեղումները վերացնելը, վորոնք խանգարում են ձեռագրի պարզությունը և ընթեռնելիությունը:

Կարող են լինել հետևյալ տիպի չեղումներ.

ա) շատ թույլ սեղմում կամ պահանջված չափից ավելի ուժեղ սեղմում՝ տառերի հիմնական գծերում.

բ) անհամաչափ սեղմում (գծերը հետզհետե հաստացնելը միջին մասում և ծայրերում).

գ) հիմնական գծերի միջև յեղած հեռավորությունների անհամաչափություն.

դ) շատ սեղմված խիտ, կամ շատ ցրված գրություն.

ե) ուղղում այնպիսի սխալների, յերբ գրության ժամանակ վորոշ տառեր չփոխվում և նմանեցվում են իրար. որինակ՝ ո և ո, փ և տ, ու, ս և ա, ի և թ, զ յել վ, չ, զ, յել դ, մեծատառ Չ, Չ և Չ տառերը և այլն.

զ) այնպիսի ավելորդ գծիկների ու մազաղծերի առկարություն, վորոնք բարդացնում են տառի կանոնավոր և իր կական պատկերն ու դժվարացնում կարգալը.

ե) գծերի տարրեր թեքությունը կամ հակառակ ուղղությամբ թեքությունը:

Գեղագրության աշխատանքները պետք է սկսել նախնական վարժություններից, ապա, համաձայն ծրագրում ընդունած նյութի դասավորության (հետից-դժվարը), անցնել տառերի տարրերի, տառերի և բառերի գրության կրկնությանը:

Գեղագրության դասերին բառերի ընտրությունը պետք է կատարել այն հաշվով, վոր նրանց մեջ գտնված տառերն ունենան այն տարրերը, վորոնց վարժությունները ծրագրը ված է անցնել տվյալ մոմենտին:

Վորպես ընդհանուր կանոն՝ սկզբում աշակերտները գըրում են դանդաղ, իսկ հետո, տառերի, տառերի և բառերի գծագրերի յուրացմանը համընթաց, գրության աեմպը հետզհետե արագացվում է:

Ամբողջ այլրենի գլխագիր և վորպարագիր տառերի գրությունը յուրացնելուց հետո անցնում են նախադասությունների, փոքրիկ հատվածների կապակցված գրության, ուղղակրության բոլոր կանոնները պարտադիր կերպով կիրառելով:

ԶԵՐԱԳԻՐԸ ՅԵՐԿՐՈՐԴ ՅԵՎ ՅԵՐՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Ծրագրով Յ-րդ և 4-րդ դասարանների համար գեղագրության հատուկ պարապմունքներ չեն նախատեսված: Սակայն դաստուն պետք է հետեւի աշակերտի ձեռագրին, մատնա-

ցույց անի նրա ձեռագրի մեջ նկատած թերությունները և  
ուղղիքները: 3-րդ և 4-րդ դասարաններում աշակերտների ձեռա-  
գրի բնորոշ սխալներն են՝ թեքում դեպի ձախ կողմը և ամ-  
ռերի վոչ հավասար բարձրություն:

Սրա պատճառն այն է, վոր յերկտող տետրակից աշա-  
կերտներն անցնում են մեկտողանի տետրակի դրության:  
Առանձին ձևեր, թե ինչպես պետք է յերկտող տետրակի  
զրությունից անցնել մեկտողանի տետրակի դրության,  
չկան: Ուսուցիչը պետք է հետեւի, վոր տառերի միջին մաս  
մեծությունը 3 մմ-ից փոքր չլինի և տառերի բարձրությու-  
նը միանման լինի, պահպանելով  $80^{\circ}$  թեքություն դեպի աջ:

Ծ Ր Ա Գ Ի Բ


## Առաջին դասարան

1. Գրության նախնական ձևեր՝  $80^{\circ}$  թեքությամբ (տես ալբենարանի ձեռագրերը):

2. Գրության ժամանակ ճիշտ նստելու, տեսրակը սեղանի վրա ճիշտ դնելու և գրչակոթին ու մատիտին ճիշտ սիրապետելու ունակություններ։ Իրանի, ձեռքերի, վոտքերի, մատների ճիշտ դիրք, ինչպես և թանաքի, ծծողակ սնի կանոնավոր գործածություն։

Հանոնավոր գործածություն։  
3. Նախնական վարժություններ՝ մատները, ձեռքերը և  
աչքաշափը զարգացնելու նպատակով, աղեղաձեւ դժբիքի  
գրություն՝ թեթև, բարակ գծիկներով՝ ձախից աջ, ինչպես  
և այս ու այն կողմքը. նախաբազուկը զարգացնելու համար  
բութը, ցուցամատը և միջնամատը սեղմել և բաց անել.  
Բարակ գծերի գրության վարժություն միայն մատների  
ողնությամբ, առանց դաստակը շարժելու. նույնը՝ հավա-  
սար սեղմումով. ձվաձեւ գծերի գրություն աջից ձախի, ձա-  
խից աջ, ուղղահայց և պառկած գիրքով, սկզբում առանց  
սեղմումի, ապա՝ սեղմումով (նկար 1)։

## Նախնական վարժություններ



Ակադեմիա

4. Տառերի և թվանշանների գծագրության ուսումնամբը բություն։ Տառերի հիմնական տարրերը. ուղիղ գիծ, ուղիղ գիծ՝ բոլորքը դեպի վեր. ուղիղ գիծ՝ բոլորքը դեպի ցած. ուղիղ գիծ՝ բոլորքը դեպի վեր և դեպի ցած. փակագիծ՝ ձախից աջ, աջից ձախ։

Տառերի լրացուցիչ տարրեր, հանդույց, ալիքաձև գիծ  
(նկար 2):

## Տառերի տարրերը

III	UUU	TTT	RRR	FFF	FFF	FFF
LLL	uuu	sss	SSS	ooo	ooo	ooo
---	(( ))	111	333	555	555	555
666	777	888	999			

144 ·

5. Տառերի առաջին խումբը՝ տառերն ունեն ուղիղ գիծ՝ բոլորքը զեպի վեր, ուղիղ գիծ՝ բոլորքը զեպի ցած, ուղիղ գիծ՝ բոլորքը զեպի վեր և զեպի ցած (նկար 3):

vii · 3

Տառերի յերկրորդ խումբը. տառերն ունեն նույն հիմ-  
նական տարրերը, բայց լրացուցիչ գծային մասնիկներով  
(նկար 4):

p, q, t, k, n

Նկ. 4

Տառերի յերրորդ խումբը. տառերն ունեն հանգույցներ  
և ձվածե գծիկներ վերևում կամ ներքեւում (նկար 5):

q, p, t, a, f, z, y

Նկ. 5

Տառերի չորրորդ խումբը. տառերն ունեն անկանոն  
գծիկներ (նկար 6):

z, շ, b, կ, ֆ

Նկ. 6

#### 6. ԳԼԽԱԴՐԵՐ (մեծատառեր)

Առաջին խումբ գլխագրեր, վորոնք ամբողջովին նման  
են փոքրատառերին (նկար 7):

P, Q, η, Ա, Ղ, Ռ, Ճ, Ի, Լ,  
Հ, Ձ, Կ, Ւ, Ղ, Ձ, Ա, Ռ,  
Ա, Ղ, Ա, Ղ, Ռ, Կ, Փ

Նկ. 7

Յերկրորդ խումբ գլխագրեր, վորոնք փոքրատառերից  
քիչ են տարրերվում (նկար 8):

Մ, Ա, Ռ

Նկ. 8

Յերրորդ խումբ գլխագրեր, վորոնք փոքրատառերից  
միանգամայն տարրեր են գրվում (նկար 9):

Ա, Զ, Ջ, Շ, Ը, Ղ, Բ

Նկ. 9

Չորրորդ խումբ գլխագրեր, վորոնք յերրեմն փոխարի-  
նում են իսկական գլխագրերին (նկար 10):

Ա, Թ, Ջ

Նկ. 10

## ՅԵՐԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Ամրապնդել կանոնավոր գրության անհրաժեշտ պայմաններն ու կանոնները պահպանելու ուսակությունները. — գրության ժամանակ կանոնավոր նստվածք, տետրակի կանոնավոր դիրք. տիրապետել գրչակոթին ու մատիտին, թառքն ու ծծողականը կանոնավոր գործադրել:

1. Ավելի արագ գրություն յերկտողի վրա (5 մմ) 80° թեքությամբ: Նստվածքի և գրիչը բռնելու պակասություններն ուղղել:

2. Նախնական վարժություններ՝ ձեռքի մատներն ու աչքաչափը զարգացնելու և տառերի նոր տարրերն ուսումնասիրելու նպատակով. առաջին ուսում. տարվա վարժությունների կրկնություն. միանդամից մանր գծերով ուղղանկյուն գցելու վարժություն՝ ձեռքի մատներն ու ամբողջ զաստակը զարգացնելու նպատակով (ըստ վորում ուղղանություն ու հորիզոնական կողմերը գրվում են թեթև ուսուցիչությամբ դեպի վեր). բոցանման և ալիքանման գծերի գրություն:

3. Փոքրատառերի գրություն (առաջին զաստանի նյութի կրկնություն):

4. Ավելի բարդ գծադիր ունեցող մեծատառերի գրության ուսումնասիրություն:

Առաջին խումբ մեծատառեր, վորոնք ունեն ուղիղ գծեր և վերեւում կամ ներքեւում՝ բոլորքներ (նկար 11):

Յերկրորդ խումբ մեծատառեր, վորոնք ունեն հանգույցներ, ձվաձեւ մասեր կամ վերջավորություններ (նկար 12):

q, զ, թ, ժ, զ, թ, թ,  
Լ, զ, զ, յ, թ, ֆ

Վկ. 12

